

Հ 1

ԱՂԵՔՍԱՆԴՐ ԱՐՄՐԱՑԵԱՆ

# ՍՈՒՏ ՃԳՆԱԿՈՐ

ՎՕԳՀՎԻԼ ԵՐԿՈՒ ԱՐԱՐՈՒԹՅՈՎ,



Հրատարակութիւն

ԱՅՐԻ ՇՈՒՇԱՆԻԿ Ա.ԲՈՐՈՏԵԱՆԻ



ԹԻՖԼԻՑ

Տպարան Մովսէս Վարդանեան՝

1891

9928

ԱՂԵՔՍՆԴՐ ԱՐՄՐԱՑԵԱՆ

ՍՈՒՏ ՃԳՆԱԿՈՐ

9928

ՎՕԴԲՎԻԼ ԵՐԿՈՒ ԱՐԱՐՈՒԱԾՈՎ


Հրատարակութիւն

ԱՅՐԻ ՇՈՒՇԱՆԻԿ ԱՐԱՐԱՏԵԱՆԻ

ԹԻՖԼԻԶ

Տպարան Մովսէս Վարդանեանի

1891



Ներկայացման և հրատարակութեան իրաւունքը վերապահուած է հեղինակի ալբին:

Առաջնային

ԱՐԱՐԱՏԻ ՊՐԵՄԻՈՒՄ ՎԻՃԱԿ

Дозволено цензурою, Тифлисъ 7 Марта 1891 г.

Типографія М Вартанянца, Ганов. ул. д. № 3

ՏԱՐԱԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԱՐԱ

1881

Եթ ուստի առաջ առաջ են առ առ  
առաջ առ առ առ առ առ առ առ առ  
առ առ առ առ առ առ առ առ առ առ  
առ առ առ առ առ առ առ առ առ առ

## ՍՈՒՏ ՃԳՆԱԻՈՐ

Վ.ՕԴԲՎ.Ի. ԵՐԿՈՒ Ա.ՐԱ.ՐՈՒ.ԾՈՎ.:

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ.

ՄԱԿԻ, սուս ճգնաւոր.

ՄԱՅԻԼ, բարեպաշտ տանտեր.

ՄԱՐԴԱՐ, նորա որդին.

ԹԱԴՈՒՆ, նորա աղջիկը.

ՓԻԵՑՏՈՒՄ, երազատես.

ԱՐԱՐՈՒԱԾ առ աջին.

ՄԻԶԻՆ կարգի տուն պարզ զարդարանքով.

1 ՏԵՍԻԼ.

ՄԱՐԳԱՐ

ՀԱՅՐԵԿ, ինչ կուզես ինձ ասա, ալդպէս  
միշտ միամիտ ես, միամիտ,

ՄԱՅԻԼ

Ի՞նչպէս, հապա այս տունը, այս կա-  
լուածքը, դովլաթն ու ապրանքը դ ու ես աշ-  
խատել:

ՄԱՐԴԱՐ

Աչքս բաց եմ արել, քեզ աշխատելիս եմ  
առանձին, ամենքն էլ գիտեն, որ դու աշխատա-  
ւոր ես, Աստուած տուել է հիմի էլ ունիս.  
Ես խօ էդ չեմ ասում:

ՄԱՅԻԼ

Բա ո՞րը:

ՄԱՐԴԱՐ

Մարդի չես կարում ճանաչել:

ՄԱՅԻԼ

Որդի, մարդ ճանաչելը հեշտ չի, 100 աղա-  
քար որ ուտես մի մարդի հետ, էլի չես կա-  
րող ճանաչել:

ՄԱՐԴԱՐ

Ո՞վ ասեց, հիմի ես այդ սուտ ճգնաւորին  
չեմ ճանաչում. ի՞նչ մարդ է, նրա մեր տուն  
գալը խօ երկու շաբաթ չկայ, համա գիտեմ  
որ նա սուտ ճգնաւոր է, քեզ խաբում է,  
հացի թանգ տարի է, գլուխը եօլա է տանում  
մեր տանը:

ՄԱՅԻԼ

Սուս, նրա անունը մի տալ, դու դեռ ջա-  
հել ես, ի՞նչ գիտես գրոց բանը, մի մարդ որ  
եօթը տարի ճգնաւորութիւն անի, նա տես  
մարդ կլինի. (Քեզից էաւճնելով).

ՄԱՐԴԱՐ

Ո՞վ տեսաւ նրան քարափումը ճգնելիս.  
Հենց որ մօտիգ Սաղմոսիցը խօսքեր է ասում,

Հենց գիտես թէ սուրբ է: Մի Աւետենց Յա-  
կոբին հարցըն, տես ի՞նչ է ասում է. Հենց  
որ էստեղից դուրս է գնում՝ թուշ աղբը  
կողմն է գնում, ինչա որ այնտեղ հարսներ շատ  
կան:

ՄԱՅԻԼ

Սուս, սուս, փուչ կենդանի, գնա դուրս,  
գնա կորիթը անպիտան:

ՄԱՐԴԱՐ

Ես կ'գնամ, համա էդ սուտ ճգնաւորին  
տանիցը դուրս արա. թէ հիւր էր, թէ լաւու-  
թիւն էր, երկու շաբաթն էլ բաւական է: Խալիքը  
մեզ վրայ խօսում են, բամբասանքի տակ ենք  
ընկել: Մեր տունը սուտ ճգնաւորենց տուն են  
ասում:

ՄԱՅԻԼ

Տօ, սուս է, քեզանից ստեր մի դուրս տալ,  
արդար մարդին սուտ ճգնաւոր ես ասում,  
Աստուած զլիսիդ կբարկանայ. գնա գործիդ  
կաց, գնա, իմ հաշիւներում դու մի խառնուիլ:

ՄԱՐԴԱՐ

Լաւ, ես անպարտ լինիմ (Քնում է):

2 ՏԵՍԻԼ

(Ինժն իբան) Եղբայր, ես այդ մարդի մէջ  
ոչինչ չար բան չեմ տեսնում, միշտ աղօթքը

բերնին, տէր ողորմէն ձեռքին, կրօնաւորի շո-  
րերում փաթաթուած՝ աշխարհի համար բարի  
է ցանկանում: Ինձ էլ հենց էդպէս մի մարդ էր  
հարկաւոր, որ ուտի, խմի իմ տանը, մեզ հա-  
մար, աշխարհի համար աղօթք անի, վնասն  
ի՞նչ է. այստեղի ժողովուրդը, տէրտէրները  
որ խելք ունենան, ալդ բարի մարդին եկե-  
ղեցու խցերումն տեղ կտան. այնտեղ մնալ՝  
ու երկրի համար աղօթք անի. բայց ում կա-  
րաս հասկացնել. Թաթոս քեօխվայ, Մաթոս  
քեօխվայ. անիծուի էսպէս ժամանակը. Էլ ո՞վ  
է տուել աշխարհիս երեսին ճգնաւոր: Հիմի  
իմ տղէն էլ ինձ ասում է մարդ չես ճանա-  
չում. Բնչ ասեմ, քէֆին դիփչում չեմ, մինու-  
ճարն ա, տօ ես որ մարդ չճանաչեմ, կարող եմ  
էսպէս ապրուստ ունենալ:

Յ Տ Ե Ա Խ Լ.

ՄԱԿԻ

(Կամաց + այլբառներ). Տէր հովուեսցէ  
զիս և ինձ ինչ ոչ պակասեսցի. . . .

ՄԱՅԻԼ

Համեցէք, համեցէք, հայր ճգնաւոր, ես  
հենց էս բօպէիս քեզ վերայ էի մտածում. ալդ  
որտեղ էիր:

ՄԱԿԻ

Այգիների ծառերի մօտ զբօսնում էի, հո-

զեղէն, Տէր, ով կացցէ ի խորանի քում կամ  
ով. . . .

ՄԱՅԻԼ

Լաւ, նստիր, հանգստացիր, տնաշէն, իրի-  
կուն առաւօտ աղօթք ես անում, բաւական է  
աշխարհին, հիմի էլ խօսի, ասա, մի քիչ սիրտգ  
ըաց արա:

ՄԱԿԻ

(Կեզ ժայլան) Իմ պարտքն է միշտ աղօ-  
թեմ, հրեշտակները (Երեսին խալակն+էլով) ինձ  
այդպէս պատուիրեցին, երբոք անապատի ճըգ-  
նութեան տեղից աշխարհ ուղարկեցին: Եւ ասիլ,  
խօսիլ, ուրախանալու իրաւունք էլ չունիմ,  
ես ուրիշների պէս հասարակ մարդ չեմ. և  
երբոք ես ուրախանամ՝ իմ հոգին սատանա-  
ների ձեռքը կ'ընկնի: «Երանեալ է այր, որ ոչ  
գնաց. . . .»

ՄԱՅԻԼ

Հայր, ասում էիր թէ մի անգամ կ'պատ-  
մեմ ճգնաւորութիւնս թէ ոնց էլաւ, հազիր  
պարապ եմ, դու էլ խօ բացի աղօթքը ուրիշ  
քան չունես, պատմիր մի տեսնենք, թէ ոնց է  
եղել քո ճգնութիւնը:

ՄԱԿԻ

Ով գու հողեղէն, կպատմեմ, միայն ու-  
րիշ չափես, որ աչքիս երևոյթք կլինեն էն  
օբհնուածները. Տէր մի համարիր զայս մեղս:

Քսան և հինգ տարեկան տղա էի, համա  
աշխարհի խէրն ու շառը չէի գիտում: Իրե-  
կուն առաւօտ գնում էի ժամ տիրացութիւն  
անում. մի անգամ երբ որտաճարի խորանում.  
Ժամաշապիկս հագնում էի.—Տէր ով կացցէ  
ի խորանի քում կամ ով բնակեսցէ իյարկի  
սրբութեան քոյ—Գաբրիէլ հրեշտակապետը  
(խաչինիւլու) իր լուսաթաթախ թևերը առա-  
ջիս փռեց ու հրամայեց, որ նստեմ վըէն,  
նստեցի ու դուրս տարաւ.—Տէր հան ի բանտէ  
զանձն իմ.—աչքս բաց արի, տեսայ որ  
էլ ոչ մարդիկ կան, ոչ ժամ, ոչ ժամատեղ,  
ոչ տներ, հրեշտակը առաջիս կանգնած մի  
քարափի տակին ցնյց էր տալիս թէ՝ ահա քո  
տեղն ալն ալրն է.—«Եղից Տէր զիս ի զբի  
ներքնումն ի խաւարի»—այնտեղ ասաց,  
այսուհետեւ ճգնաւորութիւն կանես, Աստուած  
քեզ համար մանանայ կուղարկէ: Այն քարա-  
փում ուղիղ, ուղիղ եօթն տարի մնացի ես.  
վեց տարի մանանայ էի ստանում հրեշտակի  
ձեռքով, մէկ տարի էլ երկու վալրի ալծեր  
իրիկուն առաւօտ գալիս էին կուրծը կաթով  
լիքը, կթում էի կթում ու կաթը խմում.—  
«Ի վալրի դալարւոջ անդ բնակեցոյց զիս և  
առ ջուրս հանգստեան սնոյց զիս. . . .»—  
այսպէս հողեղէն եղբայր, ապրում էի աշ-  
խարհի համար ծունը դնելով, աղօթք անելով

և արտասունք թափելով. իմ ուտելիքն այդ-  
էր, իսկ հագնելիքս ահա (Է՞ս-ըշինից հա-  
նում է յայց առալիս) այս վալրի բրդից քուրքը  
որ իմ ձեռքովս եմ կարել հրեշտակի հրամա-  
նով, իսկ այս գրեանքը, տեսնում ես, հողե-  
ղէն եղբայր, սուրբ են և ստացել եմ երկնքի  
հրեշտակներից: (համբուրում է և Մային էլ)  
Ձեռք չտաք հողեղէն եղբայր էս խուրջինին  
եթէ ոչ մեծ վնաս կտանաք: «Մի մերձեսցէ  
ի սա ձեռք մեղաւորաց»—(Է՞ս-ըշինը գալ-  
լում է գունդը գնում). Եօթն տարին որ  
լրացաւ, հրեշտակը եկաւ իր լուսաթաթախ  
թևերը բաց արեց առաջիս. ես նստեցի, էլ չի-  
մացայ թէ ուր է տանում. աչքս բաց արի,  
տեսայ ձեր օրհնեալ դրանն եմ կանգնած. և  
լսեցի հրեշտակի խօսքը, որ ասում էր. մտիք  
այս տունը, նրանք քեզ կընդունեն, միշտ  
աղօթք արա՛, մինչեւ որ ես կգամ մի ուրիշ  
տեղ կտանեմ.—Մտից ի տուն քոյ, երկրպագից  
ի տաճար սուրբ քոյ . . . »—լսեցիր, հողե-  
ղէն եղբայր, այսպէս է եղել իմ ճգնաւորու-  
թիւնս. ալժմ ես սպասում եմ սուրբ հրեշ-  
տակին—«Առաքեա Տէր զլուս քո, զի հանցէ  
զիս ի յարկս սրբութեան քո»:—  
ՄԱՅԻՆ

Լոյս ես, լոյս գառնաս հոգւով ու մար-  
մնով. հրեշտակիդ զօրութիւնը լինի իմ տուն

ու տեղի և բոլոր աշխարհի վրայ: Ճգնաւոր  
հազարից մինը էլ չլիինի էս ժամանակին:

ՄԱԿԻ

(Ժղագալու) Ի՞նչ ես հարց ու փորձ անում,  
Հողեղէն եղբայր, էդ իրաւունքը քեզ չի տուած  
իմանալու, կայ լանապատի, չկայ լաշխարհի,  
կայ աշխարհի, չկայ լանապատի, լսե՛լ ես:

ՄԱՅԻԼ

Աստուած ոչ անէ, ես ի՞նչ գիտեմ, որ այդ  
գիտենամ:

ՄԱԿԻ

Ուրեմն, գնա, հողեղէն եղբայր, գնա բա-  
նիդ կաց, ի՞նչ ես հարց ու փորձ անում, մեղք  
աւելացնում: «Տէր ամենակալ՝ Աստուած Ար-  
քահամու . . . .» —

(Մայիլը ժնում է).

4 ՏԵՍԻԼ.

ՄԱԿԻ

Հա՛, ճգնաւորութիւնս լաւէ, մեր աշխարհի  
մարդիկը ինձ նմանին շատ են սիրում, լաւ  
էլ վարձատրում են: Այս օրհնեալ Մայիլի մա-  
մոնալից մէկ կապուկ հազար մանէթ քցել եմ  
սուրբ խուրջինիս մէջը, գեռ նա բան չգիտէ.  
տեսէք որքան ա նա ինձ հաւատում: Երկու  
շաբաթուայ մէջ հազար մանէթ ի հարկէ ինձ  
նմանին քիչ բան չէ. բայց գեռ շատ բան կալ

Թոցնելու. (Գնում է ունկնդեայ, բա-  
րիէն) այս ևս թանկ կարժէ (Դնում է խոր-  
ջինը) մուտ ընդ գուռն սուրբ խուրջինիս,  
և անշարժ եղիցի մինչ փախուստն սուրբ  
ճգնաւորիս ի տանէն յիմար Մայիլի. . . .

5 ՏԵՍԻԼ.

(Մայիլը հանում է) Դատ արա ինձ Աստուած  
ի դատաստանի քում:

ՄԱՅԻԼ

Հայր ճգնաւոր, գեռ աղօթք ես անում.  
օրհնուած, գնա այգիները զբօսնիր, այնտեղ  
թուզունների երգերը կլսես և աղօթք կտնես:

ՄԱԿԻ

Բարի հողեղէն, ճանապարհին ինձ օրհ-  
նուած կանայք ու աղջկերք են պատահում,  
դժուար է այնտեղ:

ՄԱՅԻԼ

Ի՞նչպէս:

ՄԱԿԻ

Սուրբ հրեշտակն ինձ հրամայել է կեան-  
քիս մէջ կանանց երես չտեսնեմ: Զեր թաշ-  
կինակը շնորհեցէք ինձ ուրեմն, որ այն օրհ-  
նուածները երք երեան՝ երեսիս քօղ գցեմ. —  
«Լոյս տուր տէր աչաց իմոց զի մի եր-  
քէք . . . .»:

ՄԱՅԻԼ

Բա որ իմ տանը կին լինէր՝ դու ոնց կանէիր:

ՄԱԿԻ

Զեր տունն իմ օթևանն է, շատ լաւ կլինէր որ լինէր, բայց որ չկայ՝ օրհնեալ է Աստուած:

ՄԱՅԻԼ

Յամենայն ժամ, առ թաշկինակը հայր:

ՄԱԿԻ

(Ա. Ա. Ե. Ա.) Մի եկեսցէ ի վերայ իմ ոտքամբարտաւանից . . . (Քնո՞-մ է):

6 ՏԵՍԻԼ.

ՄԱՅԻԼ

(Ինչ իրան) Եղբայր, արի ասենք որ սալուսեղէն հրեշտակ է, բնչ կասես, տեսնում չես երեսն էլ ծածկում է կանանց տեսնելիս, աղլուխս էլ ձեռքից առաւ՝ որ երեսը ծածկի. Հիմի դու տես որ աղլուխս էլ սուրբ կլինի: Ոտդ այս հանդին հանդաստանին վրա գայ, այ սուրբ մարդ. աղօթքդ բարեխօս լինի առ Աստուած:

7 ՏԵՍԻԼ.

Մտնումէ մի միջահաստիկ ծերունի, գեռ դռնից ողջոյն.

ՓՐԵՑՏՈՒՄԸ

Բարի աջողում, այ Մայիլ.

ՄԱՅԻԼ

Աստուածու բարին, արի բարեկամ: ՓՐԵՑՏՈՒՄ

Ուր գամ զադէն, թէ որ սրտինս պէտք ակատարուի, տուն մտնեմ: (Հանգնո՞մ է)

ՄԱՅԻԼ

Աստուածով, արի, անա, . . . ՓՐԵՑՏՈՒՄ

(Գալով) Մայիլ ջան, երազ եմ տեսել, երազ. . . .

ՄԱՅԻԼ

Աստուած խէրը վրաբերի: ՓՐԵՑՏՈՒՄ

Մի ասա, դրուստ ա թէ սուտ:

ՄԱՅԻԼ

Ի՞նչ, իմ տղի հուջաթ խօսիլը:

ՓՐԵՑՏՈՒՄ

Զէ ա. . . . ասում են Զեր տան վարպետը զատ գիտի, դրուստ ա թէ սուտ:

ՄԱՅԻԼ

Բարեկամ, վարպետ չի:

ՓՐԵՑՏՈՒՄ

Բա բնչ ա, վարժապետ ա:

ՄԱՅԻԼ

Զէ:

ՓՐԵՑՏՈՒՄ

Աղբէր, բա ի՞նչ, միթօնի խօչի:

ՄԱՅԻԼ

(Ծէժաղէլով) Հոգուդ խի՞ ես մեղք անում,

Փրէյտում ջան: Նստի հալա նստի, տեսնամ  
ի՞նչ երազ ես տեսել:  
ՓՐԷՅՏՈՒՄ

ԶԵ, չեմ տսիլ մինչև չիմանամ թէ էդ  
մարդը կարծի մեկնել երազս:  
ՄԱՅԻԼ

Ի՞նչ ես ասում, աշխարիցն սկի խաբար  
չես: Էդ մարդը հոգւով ու մարմնով սուրբա.  
դա աշխարհի տակն ու գլուխը գիտի. դա գի-  
շեր ու ցերեկ հրեշտակների հետ ա խօսում.  
երազը չի կարող պատմել:

ՓՐԷՅՏՈՒՄ

Ես ի՞նչ գիտամ (նորելով) հազար բան են  
ասում խեղճ մարդի վերայ:  
ՄԱՅԻԼ

ԷՇ, լաւ մարդի վրայ հենց կխօսան, ամա  
դա խօ մարդ չի աղքէր, դա աշխարհ եկած  
ճգնաւոր ա, իմացար:

ՓՐԷՅՏՈՒՄ

Ասա սուրբ ա՛, էլի:  
ՄԱՅԻԼ

Սուրբից էլ աւելի ա:  
ՓՐԷՅՏՈՒՄ

Թէ մեր տէրտէրի օրումն ա:

ՄԱՅԻԼ

Ի՞նչ տէրտէր, վարդապետ կամ եպիսկո-  
պոս կարող ա դրան յաղթել, ի՞նչ ես ասում:  
ՓՐԷՅՏՈՒՄ

Բա ուր ա հմի:

Դուրս գնաց . . . . այ գալիս ա, կանգնի  
Փրէյտում. փափախդ վեր կալ:

ՏԵՍԻ.

ՄԱԿԻ

«Ի վերայ իժից և քարբից գնացես և առ  
ոտն կոխեսցես զառիւծն և զվիշապն» — Ող-  
ջոյն ձեզ, ով հողեղէն մարդիկ:

ԵՐԿՈՒԾՆ

(Գլուխ էն պալիս):

ՄԱԿԻ

Ասացէք, ի՞նչ կայ ալս չորս մթին պա-  
տերի մէջ:

ՄԱՅԻԼ

Հայր ճգնաւոր, էս մարդը քու տեսու-  
թեանն է եկել, խնդիր ունի մօտի:

ՄԱԿԻ

(նորելով) Բարի լինի, ասա, ով հողեղէն,  
ի՞նչպէս է ալս մարմնաւոր աշխարհը:

ՓՐԷՅՏՈՒՄ

Մարմնաւոր աշխարքումը ցաւերի ու նե-  
ղութիւնների մէջ ենք. . .

ՄԱԿԻ

Ի՞նչ ա ձեր ցաւերը:

ՓՐԷՅՏՈՒՄ

Հենց էս սհաթին ասեմ, խալֆա ջան:

ՄԱՅԻՆ

(Կարեւով) Մեղք ա հոգուտ, խալֆա մի  
ասիլ, հայր ճգնաւոր ասա՛:  
ՓՐԵՑՏՈՒՄ

Հա՛, ճգնաւոր ջան, իմ ցաւն էն ա որ մի  
փիս երազ եմ տեսել, եարաբ բնչ ա՛:

ՄԱԿԻ

(Ժղիպով) Իմ լուսաթաթախ հրեշտակների  
կամքով կտսեմ երազիդ մեկնութիւնը: Ասա՛,  
հողեղէն, բնչ ես տեսել:

ՓՐԵՑՏՈՒՄ

Ա՛ քէ մատաղ, հենց էս գիշեր երազումս  
ինձ մի կնիկ տարաւ մի քախչալ. մի ծառից  
մի կարմիր խնձոր քաղեց տուեց թէ հոտ քա-  
շի. համա բողազըս կրակէր ընկել, էտ իըն-  
ձորը ես քցեցի ըռեխս. հենց քցեցի թէ չէ՝  
ընկալ մի տաք ծովի մէջ, ձէն տուեցի, էր-  
ցեցի, խորովուեցի, խեղդուեցի, օգնեցէք. ամա  
օգնող չեղաւ, ուզում էի խեղդուել, զարթ-  
նեցի, տեսալ տեղումս եմ. . . .

ՄԱԿԻ

«Տէ՛ր մի կորուսաներ զծառայս քո».—  
Հողեղէն, շատ վատ երազ է: Զոքիր ալժմ,  
չոքիր առաջիս. Մալիլ եղբայր, դու էլ չոքիր,  
կանզնած մնալը մեղք ա. երբ որ ես պէտք ա  
զայտնեմ (Զուում էն.):

ՄԱԿԻ

Այն կինը, որ դու տեսել ես, մայր Աս-

տուածածինն է, (խալֆինում էն) քեզ տա-  
րել է դրախտը ցոյց տուել: Բայց սատանան  
զրկել է քեզ: Դու ուր էիր ցանկանում մե-  
ջաց պտուղը ուտել. դու պէտք ա արգար սըր-  
տով հոտ քաշէիր այն խնկելի դրախտիցը...  
ծովը որ ընկել ես, դժոխվն ա. դու ալսու-  
հետեւ ողորմութիւն շատ տուր, աղքատներին  
օգնիր, ճգնաւորաց անումը սուրբ սրտով լի-  
շիր. որ էլի արժանանաս դրախտին. եթէ ոչ,  
կընկնես գժոխվեն—կայրվես, մինը մի պըտ-  
դունց ջուր չի տալ: (Երկուան էլ խալֆինում  
էն . . . Յէտէրը պարզումում):

ՄԱԿԻ

Դեռ ալժմ վեր կացէք, հողեղէն մարդիկ,  
իմ հրեշտակներին ես կ'խնդրեմ, որ ձեր մե-  
դացը թողութիւն շնորհէ և արժանացուսցէ  
ի տան Տեաւան:

(Կանդինում էն.):

ՓՐԵՑՏՈՒՄ

Լիս գառնաս, սուրբ ճգնաւոր, դրախտին  
արժանանաս:

ՄԱԿԻ

Օրհնեալ հողեղէն, ինձ օրհնել է սուրբ  
բերանը, դու մի օրհնի, մեղք մի անիլ:  
ՓՐԵՑՏՈՒՄ

Ոտդ յերեսիս գիր ճգնաւոր ջան, մեր  
տունն արի գնանք, մի հիւանդ երեխայ ու-

Նիմ բալքի լաւացնես. քու ջափահախն էլ էս  
իմ աչքիս վըայ:

ՄԱՅԻԼ

Գնանք, հայր ճգնաւոր, տունը մօտիկ է:  
ՄԱԿԻ

Շատ լաւ, գնանք, բայց էն օրհնեալ հարս-  
ներին ու կանանցը տանիցը դուրս արէք, որ  
ինձ չտեսնան. ես էլ նրանց չտեսնամ—«Տէր  
ուղղեա զգնացս մեր ի ճանապարհս խաղա-  
ղութեան»:

ՄԱՅԻԼ

(ՓԵՐԱԳՈՒՅՆ) Սուրբ ա, սուրբ:  
ՓՐԵԹՏՈՒՄ  
Սուրբիցն էլ աւել ա, Մայիլ ջան:  
(ԳՈՒՅՆ Տ ԷՆ):

Վարդադոյն էջուած է:

—————

Արարուած երկրորդ

ՏԵՍԻԼ 1.

ՄԱՐԴԱՐ

Նզոված լինի դա, Բնչ սուտ ճգնաւոր է.  
Բնչ մեր տուն է եկել, միշտ բանս ձախ է  
գնում. Բնչ բանի ձեռք եմ տալիս, անյաջող,  
վնաս կամ մի մեծ խայտառակութիւն է պա-  
տահում . . . : Ինչ այդ անպիտան ճգնաւորը  
եկաւ մեր տուն, մի քանի օրից յետով մեր  
աղախինը՝ որ մի պարկեշտ կնիկ էր՝ էլ տա-  
նիցը դուրս գնաց. ասելով թէ՝ ես կվախեմ.  
ես էստեղ չեմ կենալ. մի օր էլ տանը մի բան  
կպատահի ինձ կմեղադրեն. կասեն դուես դո-  
ղացել, կոտրել, մեղաւորը դուես: Արի ու  
հօրս համոզի, ասա, որ՝ քո ճգնաւորն էլ  
դու ես, քո երկինքն էլ դու ես, քու սիրտն ու  
խիղճն էլ, Բնչ կհասկացնես, խօսում եմ, բար-  
կանում է, լռում եմ, լռելու բան չէ . . . :  
Եղբայր ճգնաւոր ես, գնա ճգնաւորի տուն  
գտիր, էնտեղ կաց, գնա ճգնաւորի հետ ընկե-

րութիւն արա . . . էստեղ ճգնաւոր ոչոք չկայ  
տնաքանդ, քու պատճառով մեր թշնամիքն են  
շատանում: Հայրս քեզ դուրս չի անում, դու  
ել աներես ես, քեզ ու քեզ դուրս չես գնալ,  
հարիսալ ուտող Փիլօլի օյնը գլուխի կբերեմ,  
մի լաւ վախացնեմ. լետոյ բոբիկ ոտքով էս-  
տեղից կփախչես, թևաւոր կդառնաս, կ'թըռ-  
չես . . . թէ զորթ ճգնաւոր ես . . . հենց  
էսօր էդ օլինը գլուխի կբերեմ: Դիտես Բնչ  
օրին ա, էլ Բնչ ասեմ, ես որ գիտեմ բաւական ա  
էլի՞ գնամ հօրս մի կերպ համոզեմ, կամ թէ  
չէ՝ հայրս էլ դալ ու իւր աչքովն տեսնի:  
Գնամ շուտով . . . :

## 2 ՏԵՍԻԼ

Մանում է Մարգարը.

## ՄԱՐԳԱՐ

Հայրիկ, ես քեզ չեմ ասում ալդ անպիտան  
սուտ ճգնաւորին դուրս արա մեր տանից:

## ՄԱՅԻԼ

Սուտ, սուտ, անպիտան, քու խելքն Բնչ բա-  
նի ա հասնում:

## ՄԱՐԳԱՐ

Ում խելքը, դու դեռ չես լսել, թէ դա  
Բնչ բան է ըերել աղբըում ժողոված հարսների  
գլխին: Ամենքն էլ ասում են, խօսում են,  
մեզ անիծում են, որ դրան պահում ենք:

Զէնդ կտրի, սուտ, սուտ են խօսում, դեռ  
չեն ճանաչում:

## ՄԱՐԳԱՐ

Ո՞նց թէ չեն ճանաչում: Ոմեն այստեղից  
դուրս գնալիս՝ միշտ դէպի աղբիւրն է գնում  
ու խեղճ հարսներին վախացնում: Այսօր էլ  
Աւետենց մեծ հարսին մենակ ճանկել է կադ-  
նու ծառի տակին, ուզեցել է բռնի, նա ճվա-  
ցել ա, մինչև խալսի հասնելը՝ դա պատովը  
ընկել է մեր պարտէզը. դուրս արա կորչի:

## ՄԱՅԻԼ

Ի՞նչ է ասում:

## ՄԱՐԳԱՐ

Ի՞նչ պէտք ա ասեմ: դա մի տեղ ճգնաւոր  
ա գառնում, մի ուրիշ աեղ վարժապետ, մի  
տեղ թաշճութիւն է անում, մի ուրիշ տեղ  
աւազակութիւն, գլխարկդ գլխիցդ էնպէս  
կվերցնի, որ դու բան չես հասկանալ: Ես գիր  
եմ կարդացել, բան գիտեմ, լաւին ու վատին  
ճանաչում եմ, ինձ լսիր, հայր:

## ՄԱՅԻԼ

Ոլ տղայ, գիրն ասում ա ճգնաւորին մի  
հաւատալ:

## ՄԱՐԳԱՐ

Աստօծ, երկինք, գետին, մօրս գերեզմանը  
վկայ, որ դա ճգնաւոր չի, ճգնաւորը անապա-  
տումը կը լինի: Մեր տամն էլ կնիկ չկար,

Հարս չկայ, որ աչք պահի տան եղած չեղածի վրայ: Դա երևում է որ մարդախաբ է, բաղդ փնտռող թափառականներիցն է. քեզ պէս միամիտ մարդի ա պատահել. ուզում է մեր տունն էլ հարամի. մի բան ճանկը գցի ու այնպէս դուրս կորչի, որ ոչ ով էլ ըստեսնի. . . մեր օջախը հալալ ա հայր, հալալ օջախը անպիտան մարդի չի սիրիւ, դուրս արա կորչի:

ՄԱՅԻԼ

Տէր Աստուած, արի ու մի՛ մոլորվի: Այտղայ, քո գլխումը խելք չկայ:

ՄԱՐԳԱՐ

Հայր, ես խելք ունիմ, ես ինձանից ստերշեմ ստեղծում. ես ասում եմ այն, ինչ որ լսել եմ: Աւետիսենց Պետրոսը ասում էր, որ ձեր տան սուտ ճգնաւորը մեր հարսին վախացըել է, Տանուտէրին գանգատ պէտք է անեմ, հօրդ դատաստանը անի, որ լիրք մարդ է պահում, բնչի հարցնում չես, թէ դա անցաթուղթ ունի:

ՄԱՅԻԼ

Դա ումնից պէտք է անցաթուղթ ունենայ, հրեշտակներիցը, երկնքիցը, քարափիցը, քերծիցը, դա տանուտէր է ունեցել, որ անցաթուղթ առնէր այս կողմը դալիս: Միւս անգամ իմ առաջին չխօսես էդ մասին. մեր

գեղի խալիսն էլ լուն ուխտ կշինեն, սուտը դորթ կասեն, դորթը սուտ, գուրս կորի, գնաբանիդ:

ՄԱՐԳԱՐ

Ես բան չունիմ, խաչագող աւագակին գուրս արա մեր տանիցը. խալիսը սուտ չեն ասում. նրա շարժուածքից երևում է՝ որ մարդախաբ է, դու բան չես հասկանում:

ՄԱՅԻԼ

Դէ կորի, փուշ կենդանի:

ՄԱՐԳԱՐ

Ուկը կորչեմ, ով կորչելու է, թող նա կորչի:

ՄԱՅԻԼ

Կորչելուն դուն ես, անպիտան, որ ոչ էն երկնքի թևաւոր լուսաթաթախ ճգնաւորիցն ես վախենում, ոչ էլ հօրդ խօսքը լսում:

ՄԱՐԳԱՐ

Ես ամեն բան լաւ եմ հասկանում ու ճանաչում. ինչո՞ւ մի անգամ գեղամէջ չես դուրս դալիս, որ ամեն բան լսես:

ՄԱՅԻԼ

Գեղամիջում բնչ բան ունիմ, ես քեզ պէս աներես չեմ, որ օրուալ կէս մասը պարապ սարապ նահապետենց կալումն անցկացնեմ: Երթկովս են ուզում, դընովն եմ տալիս, դընովն են ուզում, երթկովն եմ տալիս, հասկացար.

ՄԱՐԴԱՐ

Լաւ. զերջը կտեսնենք, ով է ճշմարիտ,  
և թէ դու:

ՏԵՍԻ 3.

ՄԱՅԻԼ

(Մէ կուր հոգածելուց) Կրակի մէջ եմ մնացել աղբէր. մարդ մինուճար տղայ ունենայ, էն էլ էսպէս... լաւ, այ օրդի. Հենց մի սհաթքու խօսքին գանք. լետոյ որ դրուստ ճգնաւոր լինի էդ մարդը, անիծի, նզովք անի իմ տան վերայ, էս գեղի վերայ, էլ մեր մինը երկու կդառնայ. . . . . Տօ, աշխարքումը սուստ ճգնաւոր կլինի. մարդ խալխի տունը քանդի ու ասի ես ճգնաւոր եմ, կլինի. մարդ ինձ ու քեզ խաբի, մեր ունեցածը գողանայ ու ասի թէ ես արդար եմ, կլինի. դէ ես սուտ, իմ տղէն զորթ, կլինի. Մախլաս, հիմիկուայ ջահիլները էլ ոչ ճգնաւորի են հաւատում, ոչ սրբի, ոչ հրեշտակի, ոչ էլ մեծի. մեծը խրատ է տալիս՝ ասում են միամիտ է, մեծացել խելքը կորցրել է. աշխարհ եկած ճգնաւորը իւր պաշտօնն է կատարում՝ ասում են մարդախաբ է. հիւանդը խաչիցն է բռնուած՝ չէ ասում են, խաչը մարդի ցաւ չի տալ. մեր ողորմածիկ Տէր Մարկոսը սրանից վեց տարի

առաջ ասում էր ուսումը լաւ բան է. Մարդարդդին տուր կարդացնեմ. ես էլ լսեցի, իրան տուի կարդացրեց, զրի սև ու սպիտակը որպէս թէ շանց տուեց. որ յետոյ լաւ մարդդառնայ՝ ինձ օգնի. համա Բնչ լաւ մարդ դառաւ, դէ մի գլուխդ բարձրացրու, տես Տէր Մարկոս, տես Բնչ լաւ մարդ ա դառել է, որ ճգնաւոր մարդին սուտ ճգնաւոր ա ասում է ինձ հետ էլ հակառակվում:

ՏԵՍԻ 4.

ՄԱԿԻ

«Զաստուած աղօթասերսն օրհնեսցէ և զըլսողս լիւրում արքայութեան լիշեսցէ»:

ՄԱՅԻԼ

(Երեսը իտլանիւլուց յետոյ) ԵՌ, բամբասողներ, Աստուած ձեզ պատիժ կտայ, գուք չէք իմանալ. . . (Ժողովրդին):

ՄԱԿԻ

Բնչ է, հողեղէն մարդ, ով է բամբասում. . . վնաս չունի, Քրիստոսին խաչեցին մեղաւորները, բայց Քրիստոսը ներեց նորանց մեղքը. ես ել նորան աշակերտն եմ. կներեմ. . . — Թող զմեղս բամբասողաց, զի ոչ գիտեն՝ զի՞ է ճգնաւոր և զի՞ ինքեանք:

ՄԱՅԻԼ

Բա՛, գլուխդ, ոտքերդ, շորերդ, կեղտոտ են,  
հայլ ճգնաւոր, կթողնես որ լուալ տամ:

ՄԱԿԻ

Ոչ, ոչ, հողեղէն, թող որ կեխտերը ու  
որդերն ուտեն իմ հողային մարմինը, որով-  
հետև քանի մարմինս տկարանայ, հոգիս կզօ-  
բանայ:

ՄԱՅԻԼ

Դու հանգիստ կաց, սիրտ մի պղտորել...  
Ես գնամ կերակրի պատրաստութիւն տեսնեմ.  
Ես սոված եմ, դու էլ սոված կլինես:

ՄԱԿԻ

Երթ խաղաղութեամբ, Տէր ընդ քեզ:  
(Մայելը բարձր է ժամանակա-).

ՏԵՍԻԼ 5.

ՄԱԿԻ

(Դէմ ու տէն նայելուց յիշու). Ո՞վ հողե-  
ղէն մարդիկ, երեսում է, որ ես երբեմն երբեմն  
ճգնաւորութեանս դաւաճանում եմ, ինչու լաւ  
չեմ ուսումնասիրում ճգնաւորութեանս սուրբ  
քաղանիքները (Վերջնելու մէ բաժան ու խորվինը  
ժնելով) արդէն ժամանակս լրանում է այս տանից  
հեռանալու. շուտով շուտով պէտք է տեղա-  
փոխուել, մի ուրիշ արդար տուն գտնել...  
(աղո խորվինի ժնելու հանդինելով) Այ խուրջին,

իմ ընկեր խուրջին. քո և իմ ընկերութեան  
կապն ու խորհուրդը ոչ ոք չէ կարող իմանալ.  
դու ինձանով սուրբ ես, իսկ ես ճգնաւորի անու-  
նով: Մարդին այսպէս են ինձ ընդունում: Դու  
գանգատվում ես որ փորդ մամոնալով լքցըիր.  
բայց շուտով կհարստանամ, տասը հազարի տէր  
կրառնամ՝ էն ժամանակը՝ քեզ ոսկէ թելերով  
կզարդարեմ. ոսկէ տառերով կգրեմ վրէդ. ԳԱՂԱ-  
ՆԱՊԱՀ ԽՈՒՐՃԻՆ . . . :

ՏԵՍԻԼ 6.

(Թ. ԺԵՂԱՔԻԿԻ)

ՄԱԿԻ

«Տէր լուր ազօթից իմոց, ունկնդիր բանից  
քերանոյ իմոյ . . . ».

ԹԱԳՈՒԾ

(Մայելը) Տան տէրը տանը չէ:

ՄԱԿԻ

(Երկան յեւ+ ժնելով) Ոչ, բարի հողեղէն,  
ոչ, նա այստեղ չէ:

ԹԱԳՈՒԾ

Ես խօ հոգէառ հրեշտակ չեմ, որ երեսդ  
ծածկում ես: Ես գիտեմ որ դու ամենքի հայրն  
ես (Տօքենա- է յեւ+ը համբա-ըելու-):

ՄԱԿԻ

(Զել ժնելով) Ո՞վ ես, համբան ես, աղ-  
ջիկ ես, բարի հողեղէն:

ԹԱՔՈՒԾ

Տանտիրոջ ազգականն եմ։ Մարդս մեռաւ։

ՄԱԿԻ

Հոգին երկնից իջցէ ի վերայ շողշողուն  
պատկերիդ և հանգուցեալն արժանի համա-  
րեսցի յարքայութեան երկնից։ ըստ ձեռն  
իմովք հրեշտակովք։

ԹԱՔՈՒԾ

Ես զրոց լեզու չգիտեմ, պարզ խօսա. ես  
անբաղդ եմ։

ՄԱԿԻ

Այո՛, սիրուն հարսիկ, ես կազօթեմ, որ  
քո բաղդի դռները բացուին և միշտ միշ-  
թարուած մնաս։ Մի ամաչիր հողեղէն, դու էլ  
արձակ խօսա, ուր ես եկել։

ԹԱՔՈՒԾ

Եկել եմ ինձ օրհնես, որ մի բաղդի տիրանամ։

ՄԱԿԻ

Այո՛, ես բաց կանեմ քո բաղդի փակուած  
դռները. բայց ասա ինձ սիրուն հարսիկ. վա-  
զուց է որ հանգուցեալ մարդդ վախճանուել է։

ԹԱՔՈՒԾ

Ո՞չ, նոր է, մնացի առանց մարդ (յա-էլուլ)։

ՄԱԿԻ

(Կանչնէլը) Մի մտածիլ, սիրուն հարսիկ.  
իմ հրեշտակների լուսաթաթախ թեւըով՝ դու

նոր մարդ կունենաս, ու նորան աւելի կըսի-  
րես, այնպէս չէ։

ԹԱՔՈՒԾ

Ես այժմ շատ եմ ուզում մարդ ունենալ։

ՄԱԿԻ

Այո՛, այո՛, դու դեռ կոկոն ես, դու դեռ  
վարդի վունջ ես. երեսում է որ քո մէջ սէրը  
աւելի շատ կայ, քան թէ ուրիշների մէջ. բայց  
դու նորանցից էլ գեղեցիկ ես երեսում։

ԹԱՔՈՒԾ

Ի՞նչ օգուտ գեղեցկութիւնիցս, որ ես հմի  
անմարդ եմ։

ՄԱԿԻ

(Աւանչէն). Ի՞նչ սիրուն լեզու ունի այս  
հողեղէնը, ինչ զրաւէ հասակ, կայտառ աչ-  
քեր. սիրուն հարսիկ մի մտածիլ, ես քեզ կօգ-  
նեմ։

ԹԱՔՈՒԾ

Աղաչում եմ ասա, ի՞նչպէս կօգնես ինձ,  
ճար ու գարման կանես։

ՄԱԿԻ

Քեզ ճարը անճարը կանի. ով քեզ չունի՝  
նա քո ճարն է. ում դու չունիս՝ դու նորա  
ճարն ես, սիրուն հարսիկ. . . .

ԹԱՔՈՒԾ

Դու ինձ չունիս, ուրեմն դու իմ հալլըն ես։

ՄԱԿԻ

Այն, այն, շատ ճշմարիտ, սիրել զքեզ  
պէտք է:

ԹԱՔՈՒԾ

Բայց դու սուրբ ես,

ՄԱԿԻ

Սիրուն հարսիկ, կայ աշխարհումս և սըր-  
բութեամբ սէր, սիրեմ զքեզ և դու կսըբանաս  
(առանձին) ոհ, որքան բարի է, որքան չքնաղ է.  
(յօդէնո-մ է, աղջիկ յէտ է գնո-մ) (յէտ դաս-  
նալով) «Տէր մի դարձուցաներ զերեսս քոյ  
յինէն. . . .».

ԹԱՔՈՒԾ

Ինձ համար էլ աղօթիր ինդրեմ:

ՄԱԿԻ

Ես անարժան եմ, իմ բերանս մեղաւոր է,  
քոյ սուրբ բերանը ինձ համար բաց արա, սի-  
րուն հարսիկ կարմաթուշիկ:

ԹԱՔՈՒԾ

Սուս, սուս, գալիս են:

ՄԱԿԻ

(իսկոյն) Տէր հովուեսցէ զիս և ինձ ինչ ոչ  
պակասեսցի. . .

ԹԱՔՈՒԾ

Լաւ, լաւ, քիչ աղօթք արա, ախը մեղք է:

ՄԱԿԻ

Սէրը սըրբում է ամենայն մեղք, սիրուն  
հարսիկ, սիրեմ զքեզ, սիրես և զիս, տես Բնչ  
սիրուն աչքեր են ծիծաղում դէմքիս. Բնչ  
նազելի հասակ կանգնած առաջիս, իմ հրեշ-  
տակ սիրուն հարսիկ, հան հոգիս, հապա քոյ  
սիրոյ հրեշտակը ով է:

(Այս մջացին Մայելը ճանո-մ է, և անցոց  
առեւնելով յէտ յէտ է դարձու-մ ու դիմոցը առաջ  
կէնո-մ. լսո-մ ամենայն ինչ գլո-իը, յէտ+ը և  
դայտը շարժու-մ).

ԹԱՔՈՒԾ

Թէ կարենաս մի տաղ տսես, իմն էլ դու  
կլինես:

ՄԱԿԻ

(Կո-լ ու յի+ անէլով) «Սիրուն հարսիկ,  
կարմիր թշիկ,  
ինչ ես կանգնել,  
լոփիկ մնջիկ. Տէր ես.

ԹԱՔՈՒԾ

Տէր չեմ, տէր չեմ. մի լաւ երգի, մի լաւ,  
հոգիկ սիրեմ:

ՄԱԿԻ

(Ըստ յայնին «Մէր «Թողոտ են քո փեշերը,  
+ող հայոց զօ- Կորչեն քեզնից փշերը,  
ըս-նի-ն») Թոյլ տուր քո ծոցին նանամ,  
կարմիր թշիդ մամամ: Տէր ես.

ԹԱԳՈՒԾ

Սուս, սուս, սուս, եկան, տէր չեմ:

ՄԱԿԻ

Դիր տէր պահապան բերանոյ իմոյ. . . .

ԹԱԳՈՒԾ

(Մակի պալով դրանը և յետ դառնալով) Հա՛,  
յետոյ, ասա՛, ասա՛, ոչ ով չկայ:

ՄԱԿԻ

«Աչեր ունիս շատ նախշուն,

Թշեր ունիս շատ սիրուն,

Յօնքեր ունիս ոլորուն,

Մեղք ու կարաք քոյ լեզուն: Տէր ես.

ԹԱԳՈՒԾ

(Ծակի պալով) մէկ էլ, մէկ էլ. . .

«Սիրուն ասենք սիրուն չան,

Կը ինէլ (Ես ու գու ալ մարջան,

(Ես տան փողը մեղ ընծալ,

Մեր սրտերը թող ցնծալ: Տէր ես.

ԹԱԳՈՒԾ

Տէր չեմ, տէր չեմ:

ՄԱԿԻ

«Ամբողջ գիշեր միշտ անքուն,

Իրար սիրենք ես ու գուն,

Սիրեմ զքեզ, բայց թագուն,

Մեծ վարձք կանես քու հօգուն. Տէր ես.

ԹԱԳՈՒԾ

Չէ, չէ, ինձ բնչ կտաս, որ տէր լինիմ:

ՄԱԿԻ

Այն, այն, ես քեզ արծաթեղէն կտամ, միայն  
փեշիդ տակին դիր (առելով՝ հանում է խորդի-  
նից բարձին, առվա է իրան և ազգում է հարե-  
նալ):

ԹԱԳՈՒԾ

Ոչ, ոչ, մէկն էլ տուր յետոյ:

ՄԱԿԻ

(Խորդինից վառդ հանելով) ահա այս էլ  
լաւ գրչահատ է (դարձեալ ազգում է հարենալ):

ԹԱԳՈՒԾ

(Դիմուկը կոխով բարձր.) Ա՛յ, դու անա-  
ռակ, լիրը մարդ, այս բոլորը գու մեր տանիցն  
ես գողացել:

ՄԱԿԻ

«Ասաց անզգամն. . . .»

ԹԱԳՈՒԾ

Ես տղայ եմ, տղայ, ես Մարզարն եմ, էլ  
որտեղ կարաս ազատուել իմ ձեռքիցս, աշ-  
խարհը քանդող քեօփակ. . . . Հայր, թոկը  
բեր կապոտենք, ես որ քեզ ասում էի սա  
սուտ ճգնաւո՞ր ա, չէիր հաւատում:

(Մակին դարձազգում է).

ՄԱՅԻԼ

Հսեցի, որդի, իմ աչքովը տեսալ: Քաշ  
տուր տանենք գցենք հաւաբունը. դատաս-  
տանը անենք. (Էնո՞ն էլ մտախն ուշ էն դալի՞ն):

ՄԱՅԻԼ

Ո՞հ իմ հրեշտակներ, Գաբրիէլ, Մուքէլ....

ԹԱՐՈՒԾ

Սուս, ձէնդ քեօփաք:

Վարագոյն էջնուծ է



Հանգուցեալ Աղեքսանդր Արարատեանի հեղի-  
նակած գրքերից ծախվում են այլի Շուշանիկ Արա-  
րատեանի մօտ յետևեալները՝

1.	Նրկութումբ՝ զինն է . . . . .	25 կ.
2.	Խզութեան արգասիք . . . . .	15 կ.
3.	Քերիկ մանկական . . . . .	40 կ.
4.	Լուսանման . . . . .	30 կ.
5.	Գիւղական Խալֆա . . . . .	50 կ.
6.	Փնջիկ . . . . .	25 կ.
7.	Հիմնարկութիւն գաւառ. ուսումն. . .	70 կ.
8.	Սուտ ճկնաւոր . . . . .	30 կ.

Ծախվում են բոլոր գրավաճառների և այլի  
Տ. Ե. Արարատեանի մօտ հետևեալ հասցէով՝  
Фоминная улица д. № 15; Шушанику Ара-  
ратянцъ.

ՄԱՅԻԼ



MAL009359

ԳԻՒՆ Ե 30 ԿՈՊ.